

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
զլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N:708 հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

1. Ընդհանուր դրույթներ
<p>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) կրթության, մշակույթի և սպորտի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ, ծածկագիրը՝ 98-1.4-Ղ4-1</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ)</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհի 16</p>
2. Պաշտոնի բնութագիրը
<p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>1. Ապահովում է մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարումը, օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների իրականացումը և մարզպետի գործունեության օպերատիվությունն ու արդյունավետությունը</p> <p>2. Ապահովում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման, կազմման և իրականացման աշխատանքները.</p> <p>3. Համայնքների ղեկավարներին և մասնակիցներին պարզաբանումներ է տալիս ոլորտի փոփոխված և նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ.</p> <p>4. Ապահովում է վերահսկողություն նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, մասնակցում է կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացմանը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.</p> <p>5. Ապահովում է դպրոցական տարիքի, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառման համակարգման և վերահսկման աշխատանքները,</p>

6. Ապահովում է վերահսկողություն պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի շահագործումը և պահպանումը.
7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով աջակցում է պետական ուսումնական հաստատության տնօրենի և մանկավարժական աշխատողի վերապատրաստման, ատեստավորման և ընտրության գործընթացներին
8. Աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման կամ թեստավորման գործընթացին
9. Ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակմանը, մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձևավորմանը, մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպմանը, շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհմանը, բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման և վերաորակավորման, ուսանողների, ունկնդիրների ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների և գործնական աշխատանքների կազմակերպումը
10. Աջակցում է աշխատանքային շուկայի պահանջարկի բարելավմանը
11. Սահմանված կարգով ապահովում է պետական կազմակերպությունների կառավարման մարմինների ձևավորման և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման աշխատանքները.
12. Աջակցում է մարզպետին կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու պետական կազմակերպությունների գործադիր մարմինների կամ կոլեգիալ կառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները
13. Ապահովում է պետական կազմակերպությունների գործունեության մասին հաշվետվությունների և դրանց ստուգման արդյունքների քննարկումները
14. Ապահովում է մարզի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացման գործընթացը, կազմակերպում է պետական, ազգային ու այլ տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստում է ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը
15. Իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ՝ մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ.
16. Համակարգում է մարզի տարածքում մշակութային օբյեկտների կառուցման, պահպանման ու շահագործման, ինչպես նաև հանգստի գոտիների ստեղծման աշխատանքները
17. Ապահովում է հսկողության իրականացում մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման առաջնային ուղղություններով պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ.
18. Համակարգում է մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և Ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացը.
19. Աջակցում է մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցությանը.
20. Աջակցում է պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեությանը.
21. Ապահովում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին

հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.

22. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

23. Ապահովում է Վարչության խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները.

24. Համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Մարզպետարանի գլխավոր քարտուղարին Վարչության քաղաքացիական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

25. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության ծրագրերը.

26. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

27. Վարչության առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Մարզպետարանի գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

Իրավունքները՝

- Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերն ու ընդունած նորմատիվ իրավական ակտերը, օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների իրականացման ընթացքի վերաբերյալ մարզային կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- Մարզպետարանի ենթակայության կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, հիմնավորումներ և փաստաթղթեր
- Համապատասխան պետական կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն փոփոխված և նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ .
- Ուսումնասիրել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման գործընթաց, անհրաժեշտ պարզաբանումներ ստանալ բացթողումների վերաբերյալ.
- Համայնքներից և մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից ստանալ դպրոցական տարիքի, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն.
- Ուսումնասիրել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանները, կազմել անհրաժեշտ նախագծեր.
- Ուսումնասիրել պետական ուսումնական հաստատությանների տնօրենների և մանկավարժական աշխատողների համակազմը, հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն.
- Ուսումնասիրել ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների

համակազմը, հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն.

- Ուսումնասիրել տվյալ ոլորտների պահանջները, նշված կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- Ուսումնասիրել աշխատանքային շուկայի պահանջարկը, հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն.
- Ուսումնասիրել պետական կազմակերպությունների կառավարման մարմինների ձևավորման կարգը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ տեղեկատվություն ստանալ
- Ուսումնասիրել ոլորտի պետական կազմակերպությունների գործադիր մարմինների կամ կոլեգիալ կառավարման մարմինների որոշումները, նրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին
- Ուսումնասիրել պետական կազմակերպությունների գործունեության մասին հաշվետվությունները և դրանց գործունեության ստուգման արդյունքների քննարկումները
- Ուսումնասիրել մարզի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացման ուղղությունները, մարզում գործող կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն պետական, ազգային ու այլ տոների և հիշատակի օրերի, զանգվածային միջոցառումների, ազգային ծեսերի վերականգնման ու տարածման հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ
- Ուսումնասիրել մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման վիճակը, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն
- Ուսումնասիրել մարզի տարածքում մշակութային օբյեկտների կառուցման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտությունը, տեղեկատվություն ստանալ դրանց պահպանման ու շահագործման վերաբերյալ
- Ուսումնասիրել և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման առաջնային ուղղությունների վերաբերյալ
- Ուսումնասիրել մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի առկա վիճակը, տեղեկատվություն ստանալ դրանց պահանջի վերաբերյալ.
- Ուսումնասիրել մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցության վիճակը, տեղեկատվություն ստանալ նրանց պահանջների վերաբերյալ.
- Ուսումնասիրել պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված որոշումները, համապատասխան կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն

Պարտականությունները`

- Մշակել և Մարզպետին ներկայացնել առաջարկություններ համապատասխան բնագավառին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ.
- Մշակել, կազմել և մարզպետին ներկայացնել ծրագրերի նախագծեր տվյալ ոլորտի սոցիալ-

տնտեսական զարգացման վերաբերյալ

- Մարզի խորհրդի և տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդակցությունների ժամանակ պարզաբանումներ տալ ոլորտի փոփոխված և նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ.
- Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել թերացումներն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում մարզպետի հաստատմանը ներկայացնել որոշման նախագծեր
- Կազմակերպել դպրոցական տարիքի, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառման համակարգման և վերահսկման աշխատանքները, ապահովել նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.
- Վերահսկել պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի շահագործումը և պահպանումը, կազմել որոշումների նախագծեր և ներկայացնել Մարզպետի հաստատմանը, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում առաջարկություն ներկայացնել Մարզպետին համաձայնություն տալու գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար
- Աջակցել պետական ուսումնական հաստատության տնօրենի և մանկավարժական աշխատողի վերապատրաստման, ատեստավորման և ընտրության գործընթացներին.
- Աջակցել ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման կամ թեստավորման գործընթացին
- Մշակել և Մարզպետին ներկայացնել առաջարկություններ արհեստագործական և միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակման, մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձևավորման, մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպման, շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհման, բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման և վերաորակավորման, ուսանողների, ունկնդիրների ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների և գործնական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ
- Մարզպետի միջոցով առաջարկություններ ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմինն՝ մասնագետների և նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ.
- Մահմանված կարգով թեկնածուներ ներկայացնել պետական կազմակերպությունների կառավարման մարմինների կազմում ընդգրկելու համար, կազմել անհրաժեշտ նախագծեր նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ.
- Առաջարկություն ներկայացնել Մարզպետին կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու պետական կազմակերպությունների գործադիր մարմինների կամ կոլեգիալ կառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները
- Տեղեկատվություն ներկայացնել Մարզպետին պետական կազմակերպությունների գործունեության մասին հաշվետվությունների և դրանց ստուգման արդյունքների վերաբերյալ
- Մարզպետի հաստատմանը ներկայացնել Մարզի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացման ապահովմանն ուղղված, պետական, ազգային ու այլ տոնների

և հիշատակի օրերի, զանգվածային միջոցառումների, ազգային ծեսերի վերականգնման ու տարածման հետ կապված զանգվածային միջոցառումների նախագծեր

- Մարզպետին ներկայացնել տեղեկատվություն մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման վիճակի վերաբերյալ
- Տեղեկատվություն, ինչպես նաև որոշման նախագծեր ներկայացնել Մարզպետին մարզի տարածքում մշակութային օբյեկտների կառուցման, պահպանման ու շահագործման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ
- Մշակել և մարզպետի հաստատմանը ներկայացնել մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման առաջնային ուղղությունների վերաբերյալ որոշման նախագծեր
- Տեղեկատվություն, ինչպես նաև որոշման նախագծեր ներկայացնել Մարզպետին մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի բարելավման վերաբերյալ
- Տեղեկատվություն, ինչպես նաև որոշման նախագծեր ներկայացնել Մարզպետին մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկներին ու թիմերին համապատասխան պարգևների ներկայացնելու համար, Մարզպետին ներկայացնել տեղեկատվություն դրանց կատարման ընթացքի վերաբերյալ

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության կամ մշակույթի կամ սպորտի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

(3.3 կետը փոփ. 27.02.2020թ. N:236 հրաման)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Հասարակության հետ կապերի ապահովում
5. Բողոքների բավարարում
6. Ժամանակի կառավարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: